

X-ից փոքր

Տրված են 0 և 1 թվերից կազմված n երկարության հաջորդականություն և x թիվը: Անհրաժեշտ է գտնել այն միջակայքերի քանակը, որոնց համար այդ միջակայքում գրված երկուական կոդին համապատասխան թիվը փոքր է x -ից:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են 2 բնական թվեր՝ n ($1 \leq n \leq 10^5$) և x ($1 \leq x \leq 10^9$): Հաջորդ տողում տրված են բացակով անջատված n հատ թվեր, որոնցից յուրաքանչյուրը կամ 1 է, կամ 0:

Ելքային տվյալներ

Ելքի միակ տողում անհրաժեշտ է արտածել 1 թիվ՝ այն միջակայքերի քանակը, որոնց համար այդ միջակայքում գրված երկուական կոդին համապատասխան թիվը փոքր է x -ից:

Օրինակ

Մուտք.

5 3

0 0 1 1 0

Ելք.

9